Զաքարյան Վ. Պ.
Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների
ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ.
Էլ. փոստ՝ zvahagn@gmail.com

ՀՀ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Բանալի բառեր - *մարզային հեռուստաընկերություններ, մոնիթորինգ, հեռուստածրագրեր, մշտադիտարկում*

1. Մարզային հեռուստաընկերությունների գործունեությունը

Հայաստանյան մասնավոր հեռուստաընկերությունների շարքում առանձնահատուկ ուսումնասիրության նյութ է մարզային հեռուստաընկերությունների հիմնադրման, կազմավորման և զարգացման գործընթացը: Դեռևս 1990-ականների առաջին կեսին հիմնադրված հայաստանյան մարզային հեռուստաընկերությունները նորանկախ հանրապետության կայացմանը զուգահեռ ձևավորեցին իրենց գործունեության առաջնահերթությունները: Հայաստանյան մարզային հեռուստաընկերությունների ծրագրային քաղաքականության և ընթացիկ գործունեության մասին պատկերացում կազմելու համար 2016թ. հոկտեմբերի 3-9-ը ժամանակահատվածում կատարվել է մշտադիտարկում. ուսումնասիրվել է մարզային հինգ լրատվամիջոցների՝ «Անկյուն գումարած երեք», «Լոռի», «ԱԼՏ», «Սոսի», «Ցայգ» հեռուստաընկերությունների գործունեությունը:

Կարևոր է նշել, որ մշտադիտարկմանը նախորդող շաբաթվա ընթացքում հանրապետության մարզերում տեղի էին ունեցել ՏԻՄ ընտրություններ, որոնք բնականաբար անդրադարձներ էին ունեցել նաև մարզային հեռուստաընկերությունների հաջորդող շաբաթվա եթերում: Մշտադիտարկման շաբաթվա ընթացքում ամեն օր բոլոր հեռուստաընկերություններն անդրադարձել են ՏԻՄ ընտրությունների ընթացքին:

1.1. «Ցայգ» հեռուստաընկերություն

Հիմնվել է 1991թ. Գյումրիում: Հայաստանյան մարզային հեռուստաընկերությունների շարքում «Ցայգ»-ը մշտապես առանձնացել է հաղորդումների բազմազանությամբ: Եթեր է հեռարձակվում Շիրակի մարզում, հասանելի է նաև համացանցով: «Այսօր» լրատվականը «Ցայգ»-ի եթերում ամեն օր ներկայացնում է մարզային, հանրապետական և միջազգային նորություններ[1]: Մշտադիտարկման շաբաթվա ընթացքում լրատվական հաղորդման գրեթե բոլոր թողարկումներում առաջնային ուշադրություն դարձվեց ՏԻՄ ընտրությունների ընթացքին, արդյունքներին և տեղի ունեցած խախտումներին: Լրատվական թողարկումներն աչքի են ընկնում նյութերի թեմատիկ բազմազանությամբ: «Այսօր» լրատվականը ՏԻՄ ընտրություններն ամբողջացնող հատուկ թողարկմամբ ներկայացրեց նաև տաղավարային հարցազրույցներ մի քանի հյուրերի հետ, ովքեր անդրադարձան ընտրությունների ընթացքին:

Հատկանշական է, որ լուրերի թողարկումներում ներկայացվում են նույն նյութի վերաբերյալ տարբեր կողմերի տեսակետները: Մշտադիտարկման մեկ շաբաթվա ընթացքում թեմաների լուսաբանման հաճախականությամբ «Ցայգ»-ը ուսումնասիրված մարզային հեռուստաընկերությունների մեջ առաջնային տեղում է: Մասնավորապես ՏԻՄ ընտրությունները, դպրոցներում առկա որոշ խնդիրներ, թվային հեռարձակմանն առնչվող հարցերը շաբաթվա ընթացքում պարբերաբար ներկայացվեցին հեռուստաընկերության եթերում:

«Ցայգ» հեռուստաընկերության եթերում նյութերի հավասարակշռված լուսաբանումն ակնառու է, կարևոր է նշել նաև մասնագիտական էթիկայի սահմաններում լրագրողների աշխատելու ունակությունը: Հատկապես լրատվական թողարկումներում և հասարակական-քաղաքական մի շարք հաղորդաշարերում թեմաները ներկայացվում են համակողմանիորեն, ուսումնասիրվում են խորու-

[1] http://tsayg.am/aysor.html

թյամբ: Հեռուստաընկերության եթերում ներկայացվում են ավելի քան 15 մշտական հաղորդաշարեր, որոնց մեծամասնությունը սոցիալական-քաղաքական թեմատիկ ուղղվածություն ունի, ամբողջապես ներկայացնում է մարզում առկա հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Չնայած այն հանգամանքին, որ «Ցայգ»-ը հիմնականում անդրադառնում է Շիրակի մարզին, հեռուստաեթերում ներկայացվում են նաև առաջնային հանրապետական և միջազգային նշանակության մի քանի նորություններ: Ուսումնասիրության առարկա մարզային մյուս հեռուստաընկերությունների հետ համեմատելիս «Ցայգ»-ի տեխնիկական հնարավորություններն ակնառու են: «Ցայգ»-ում առավելագույնս են օգտագործվում ինֆոգրաֆիկայի ընձեռած հնարավորությունները, ինչն ավելի մատչելի է դարձնում նյութի ընկալումը հեռուստադիտողի կողմից: Նյութերի մատուցման որակական տեսանկյունից «Ցայգ» հեռուստաընկերությունն առաջնայնություն ունի, և դրանք քիչ չեն տարբերվում մայրաքաղաքային առաջնակարգ հեռուստաընկերությունների եթերում հեռարձակվող հեռուստաարտադրանքից: Որոշակի թերություններ առկա են լրատվական թողարկումների ռեպորտաժների օպերատորական աշխատանքում: Մշտադիտարկման ժամանակահատվածում հիմնական ուշադրությունը սևեռված էր ՏԻՄ ընտրությունների արդյունքների ամփոփմանը, արձանագրված խախտումներին:

1.2. «Անկյուն գումարած երեք» հեռուստաընկերություն

Գործունեության ինքնատիպ ձեռագրով առանձնանում է նաև մարզային մեկ այլ հեռուստաընկերություն՝ «Անկյուն գումարած երեք»-ը, որը հիմնադրվել է 1999 թ. Հրաչյա Պապինյանի և Սոս Սիրադեղյանի կողմից Լոռու մարզի Ալավերդի քաղաքում: Հեռուստաալիքը ներկայացնում է տեղեկատվական, քաղաքական, սոցիալական, մշակութային և ժամանցային հաղորդումներ[2]:

[2] https://twitter.com/ankyun3

Մշտադիտարկման շաբաթվա ընթացքում այս հեռուստաընկերության եթերում նույնպես ուշադրության կիզակետում ՏԻՄ ընտրությունների արդյունքների ամփոփումն էր: Անշուշտ, տեղայնացված նորությունների այսօրինակ ընդգրկուն անդրադարձը մեծապես կարևոր է մարզային հեռուստաընկերության եթերում: Այս հանգամանքով էր պայմանավորված նաև ամբողջ շաբաթվա ծրագրային քաղաքականությունը: Լրատվական հաղորդման ընթացքում օգտագործվում է ինֆոգրաֆիկա, ինչը մեծացնում է նյութի ընկալունակությունը, սակայն տեղեկույթը բավականին պարզունակ է մատուցվում տեխնիկական տեսանկյունից:

Ցավոք, ժամանակակից տեխնոլոգիաները դեռևս թերի կիրառություն ունեն «Անկյուն գումարած երեք» հեռուստաընկերության եթերում: Լրագրողական խոսքը, նյութի մատուցումը նույնպես թերի են իրականացվում: Հեռուստաընկերության եթերաժամանակում զգալի հատված հատկացվում է Ալավերդու քաղաքապետի գործունեությանը: Երբեմն այնպիսի տպավորություն է, որ «Անկյուն գումարած երեք»-ը աշխատում է բացառապես քաղաքապետի գործունեությունը ներկայացնելու նպատակով: Մշտադիտարկման շաբաթվա մեկ այլ ռեպորտաժում ներկայացվում են Ալավերդու ինքնավարության օրվան նվիրված իրադարձությունները: Լրագրողական նյութի մատուցումն այստեղ հետաքրքիր է, սակայն առկա են տեխնիկական թերություններ՝ ձայնաշարի հետ կապված:

«Անկյուն գումարած երեք» հեռուստաընկերության եթերում հատուկ ուշադրության են արժանանում մշակութային ձեռնարկները /Թատերական Լոռի փառատոն, Ճապոնական թատերախումբը Լոռիում, Համազգային թատրոնը Ալավերդու բեմում և այլն/: Թեմաների լուսաբանման հաճախականությամբ շաբաթն աչքի ընկավ բացառապես ՏԻՄ ընտրություններին առնչվող նյութերով: Կարևոր է փաստել, որ առանձին հաղորդաշարերում նկատելի էր քննադատական մոտեցումը: «Անկյուն գումարած երեք»-ը պարբերաբար անդրադառնում է նաև այլ մարզերում տեղի ունեցող իրադարձություններին և ՀՀ կառավարության այն նիստերին, որոնցում անդրադարձ է լինում Լոռու մարզին: Հեռուստաընկերությունը որոշ

հաղորդաշարերի և հատկապես համացանցի միջոցով պահում է հետադարձ կապը լսարանի հետ, բնակչության առաջարկ-բողոքների հետքերով պարբերաբար ներկայացնում որոշ խնդիրներ:

1.3. Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերություն

Մշտադիտարկման շաբաթվա ընթացքում ուսումնասիրվել են նաև Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության հաղորդումները: Հեռուստաալիքը ներկայացնում է լրատվական, հասարակական, քաղաքական, երաժշտական և ժամանցային բնույթի հաղորդումներ: Այստեղ տեղեկատվական թողարկումները առավել բարձր ռրակական մակարդակի վրա են գտնվում[3]: Օպերատորական և մոնտաժային աշխատանքում երբեմն նկատելի են թերություններ: Այս հեռուստաընկերության եթերում հատուկ տեղ է հատկացվում ակնարկի ժանրում պատրաստվող հաղորդումներին. մարզի նշանավոր գործիչների կյանքն ու գործունեությունը տարբեր հեռուստաշարքերի միջոցով ներկայացվում են բնակչությանը: Քննադատական նյութերի առկայությունը հեռուստատեսության եթերում միջին մակարդակի վրա է գտնվում, որոշակի զգուշություն է նկատվում մարզում առկա խնդիրների առնչությամբ վերլուծական նյութեր ներկայացնելու հարցում: Իրականում խնդիրները հաճախ ներկայացվում են անհասցե, չեն մատնանշվում պատկան այն կառույցները, որոնք պատասխանատու են դրանց լուծման գործում: Մշտադիտարկման շաբաթվա ընթացքում հեռուստաեթերում առկա էին նաև ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման մի քանի ակնառու օրինակներ (ինֆոգրաֆիկա, հավելյալ գործիքների կիրառում):

Հեռուստաընկերությունը լսարանի հետ հետադարձ կապը հիմնականում պահում է համացանցի միջոցով, սակայն նյութերից հասկանալի է դառնում, որ հեռուստաղիտողների հետ հետադարձ կապի այլ գործիքներ նույնպես կիրառելի են: Բավականին հետաքրքիր էր Արմավիրի 85-ամյակին նվիրված հաղորդումը, որը

[3] http://www.alttv.am/category

ներկայացվեց ուսումնասիրված շաբաթվա ընթացքում: Այստեղ ակնառու են լրագրողական նյութի բազմաշերտությունը, խորությունը: Ռեժիսորական աշխատանքի առումով նշված հաղորդումը գտնվում է շահեկան վիճակում: Հեռուստաընկերության եթերում պարբերաբար ուշադրության են արժանանում գյուղատնտեսությանն առնչվող հարցերը: Այս դեպքում նյութը մատուցվում է կարծիքների բազմազանությունն ապահովելով:

1.4. «Լոռի» հեռուստաընկերություն

«Լոռի» հեռուստաընկերությունը հիմնվել է 1995 թվականին Վանաձորում: Մշտադիտարկման շաբաթվա ընթացքում մի քանի հաղորդումների ժամանակ պարբերաբար անդրադարձ կատարվեց ՏԻՄ ընտրությունների արդյունքների ամփոփմանը[4]: Մասնավորապես «Մունետիկ» լրատվականը համակողմանիորեն ներկայացրեց ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումները: Ուսումնասիրության դիտակետում ունենալով լրատվականի մի քանի թողարկումներ՝ կարող ենք արձանագրել, որ թեմաներն ու խնդիրներն անաչառորեն և համակողմանիորեն են լուսաբանվում, ապահովվում է կարծիքների, աղբյուրների բազմազանությունը: Հատկապես ընտրություններին հաջորդող օրը ինֆոգրաֆիկայի միջոցով առավել պատկերավոր ներկայացվեցին ՏԻՄ ընտրությունների արդյունքները:

«Մունետիկ» լրատվականում պարբերաբար անդրադարձ է կատարվում մշակութային իրադարձություններին: Մասնավորապես հիշյալ շաբաթվա ընթացքում ներկայացվեց ռեժիսոր Վահե Շահվերդյանի հոբելյանին նվիրված ռեպորտաժ, անդրադարձ եղավ գրադարանավարի օրվան, ինչպես նաև բատիկայի խմբակի ցուցահանդեսին: Ռեպորտաժներում սինքրոնների տևողությունը մեծ է, ինչը որոշակիորեն վնասում է ռեպորտաժի դինամիկ մատուցմանը: «Լոռի» հեռուստատեսության եթերում ուսումնասիրված

[4] http://loritv.am/տիմ-2016/

շաբաթվա ընթացքում ՏԻՄ ընտրություններին պարբերական անդրադարձ եղավ «Հայացք ներսից» հաղորդաշարի ընթացքում[5]: Հեռուստաընկերությունը բովանդակային առումով շահեկան վիճակում է գտնվում, սակայն տեխնիկական խնդիրները ակնհայտ են (ռեժիսորական և օպերատորական թերի աշխատանք): Հեռուստատեսային տաղավարները մռայլ են, ձևավորումը՝ պարզունակ: Հեռուստաընկերության եթերում պարբերաբար ներկայացվում են նաև մարզական իրադարձությունները, ինչը հազվադեպ հանդիպող երևույթ է մարզային հեռուստաընկերություններում:

1.5. «Սոսի» հեռուստաընկերություն

Ստեղծվել է 2000 թվականին 1996-ից գործող «Ձագեձոր» հեռուստաստուդիայի խմբագրության բազայի հիման վրա: Հեռուստաընկերության հաղորդումները հեռարձակվում են Կապան, Սիսիան, Գորիս, Քաջարան, Մեղրի, Ագարակ քաղաքներում[6]: «Լուրեր» տեղեկատվական ծրագիրը ներկայացնում է հիմնականում մարզային իրադարձությունները: Հիշյալ շաբաթվա ընթացքում լրատվական թողարկումները հաճախ սկսվում էին Սյունիքի արդեն նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորանքով կամ որևէ այլ բնույթի ելույթով, որը, որպես կանոն, ներկայացվում էր հաղորդավարական խոսքի միջոցով: Տեխնիկական առումով հեռուստաընկերությունը շատ թույլ վիճակում է գտնվում: Լրատվական թողարկումներում օգտագործվում են լուսանկարներ, որոնք վատ որակ ունեն[7]:

Չնայած ակնառու տեխնիկական խնդիրներին՝ «Սոսի» հեռուստաընկերության եթերում պարբերաբար ներկայացվում են նաև մարզային նշանակության հիմնախնդիրներ: Մասնավորապես մշտադիտարկման շաբաթվա ընթացքում ներկայացվեցին Օխտար գյուղի դպրոցի խնդիրները: Նույն շաբաթվա ընթացքում ցուցա-

[5] http://loritv.am/մոնետիկ/
[6] http://sosi-tv.com/online.html
[7] http://sosi-tv.com/info/

դրվեց Կապանի մարզադպրոցի վերականգնման աշխատանքների մասին պատմող ռեպորտաժ: Քննադատական և վերլուծական նյութերի քանակը նույնպես քիչ է: Շաբաթվա ընթացքում հաղորդումները հաճախ են կրկնվում: Կարելի է ենթադրել, որ պատճառը մարզային իրադարձությունների սակավությունն է: «Սոսի» հեռուստաընկերությունը ներկայացված է նաև համացանցում և սոցիալական ցանցերում, ինչը հնարավորություն է ընձեռում հեռուստադիտողների հետ արդյունավետ հետադարձ կապ հաստատելու:

Մշտադիտարկման արդյունքների ամփոփում

Ամփոփելով հայաստանյան մարզային մի քանի հեռուստաընկերությունների եթերի մեկշաբաթյա ուսումնասիրության արդյունքները՝ առանձնացնենք մի քանի դիտարկում:

1. Մարզային հեռուստաընկերություններում, նախորդ տարիների հետ համեմատած, նկատելի է նյութի մատուցման դրական փոփոխություն:
2. Ուսումնասիրված մարզային հեռուստաընկերությունները տեխնիկական առումով առաջընթաց գրեթե չեն արձանագրում՝ բացառությամբ «Ցայգ» հեռուստաընկերության:
3. Ընդարձակել են ներկայացվածությունը համացանցում, մեծացրել են հեռուստադիտողների հետ հետադարձ կապ հաստատելու գործիքները:
4. Շարունակում են առավել խորքային ներկայացնել տեղական իրադարձությունները, հետևողական են առկա խնդիրների լուծման գործում:
5. Շատերը շարունակում են ֆինանսական կախվածություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմիններից:
6. Մասնագիտական կադրերի վերապատրաստման անհրաժեշտություն ունեն:
7. Եթերում որոշակի պարբերականությամբ ներկայացվում են նաև այլ մարզերում տեղի ունեցող իրադարձությունները, նկատելի է բովանդակային առջընթաց:

8. Ստեղծվել են նոր հաղորդաշարեր, որոնք առավել մեծ հնարավորություն են տալիս մարզային խնդիրները ներկայացնելու և պարբերաբար լուսաբանելու համար:

РЕЗЮМЕ

Закарян В. П.

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКИХ РЕГИОНАЛЬНЫХ ТЕЛЕКАНАЛОВ НА ДАННОМ ЭТАПЕ

Ключевые слова: *региональные телевидение Армении, мониторинг, телепрограммы*

Среди частных телевизионных телеканалов Армении предметом особого изучения представляется процесс основания, становления и развития региональных телеканалов. С целью представления программной политики и текущей деятельности армянских региональных каналов 3-9 октября 2016 года был проведен мониторинг, в ходе которого были изучены пять телевизионных СМИ: деятельность «Анкьюн гумарац ерек» («Угол плюс три»), «Лори», «АЛТ», «Соси», «Цайг» телеканалов.

SUMMARY

Zakaryan V. P.

THE ACTIVITY OF THE REGIONAL TV IN THE MODERN STAGE

Kay words: *Armenian Regional TVs, Monitoring, TV programs*

The establishment of regional TV companies, their formation and development process is a special study material among the private TVs. From October 3 to 9 special monitoring was carried out in order to get picture of pragmatic policy and current activities of Armenian regional TV. There was studied five regional TVs' activities: "Ankyun gumarac ereq", "Lori", "ALT", "Sosi", "Tsayg".